ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 նոյեմբերի 2022 թվականի N 1747-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածով, հողային օրենսգրքի 65-րդ հոդվածի 6-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2022 թվականի հոկտեմբերի 26-ի N 758-Ա որոշումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Համաձայնություն տալ «Հայաստան» համահայկական և «Ջոն և Հասմիկ Մկրտիչյան» հիմնադրամների միջև 2022 թվականի ապրիլի 20-ին կնքված «Սյունիքի մարզի Գորիսի տարածաշրջանի Ներքին Խնձորեսկ համայնքում բնակելի տների կառուցման ծրագրի համատեղ իրականացման մասին» համաձայնագրին համապատասխան «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից, բարեգործական որակված «Տների կառուցում ծրագրի իրականացման նպատակով, Սյունիքի մարզի Գորիս համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության 0.7233 հեկտար

մակերեսով բնակելի կառուցապատման հողամասերը՝ համաձայն N 1 հավելվածի «Հայաստան» համահայկական հիմնադրամին նվիրաբերությամբ տրամադրելուն:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետով սահմանված թվով 6 բնակելի տների կառուցման ծրագրի շրջանակներում հողամասերն անհատույց սեփականության իրավունքով՝ նվիրաբերությամբ տրամադրելու գործարքների հիմնական պայման-ները՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին՝ նվիրաբերման պայմանագիրը կնքելու պահից երեք տարվա ընթացքում, բարեգործական որակված, ծրագիրը չիրականացնելու դեպքում ներկայացնել սույն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ:

4. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի ղեկավարին՝ նվիրաբերության պայմանագրերում նախատեսել դրույթ, համաձայն որի ծրագիրը սահմանված ժամկետում չիրականացնելու դեպքում հողամասերը և դրանց վրա առկա անշարժ գույքերը սեփականության իրավունքով անցնում են նվիրաբերող համայնքին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

17.11.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ